## Բ ա ց ա տ ր ա գ ի ր

Սույն նախագիծը մշակվել է համաձայն ՊԱՏՎԵՐ ԵՔ-ՊԸԱՇՁԲ-13/71-2 պայմանագրի, ըստ որի կատարվել է Երևան քաղաքի Շինարարների 33, 35 շենքերի բակային տարածքի զբոսայգու և խաղահրապարակի ոռոգման ցանցի տեղազննում: Տեղազննման արդյունքում պարզվել է, որ տարածքը զուրկ է ոռոգման ցանցից: Գոյություն ունեցող մոտակա ոռոգման ցանցի Փ100մմ խողովակագիծը անցնում է Շինարարների 35 շենքի մոտով, այն գտնվում է բարվոք վիճակում:

Նախագծով նախատեսվում է մոտ 97.5մ Dy50- Dy40 տրամագծի պողպատե խողովակաշարից ոռոգման ցանցի իրականացում: Միացումը կիրականացվի գոյություն ունեցող ոռոգման Փ100մ գծից: Ցանցը փակուղային է, նախատեսվում է թվով 8 ջրթող, 2 ցնցուղային և 1 դատարկման հանգույցների իրականացում: Ոռոգման եղանակը մակերեսային է: Համակարգի դատարկումը իրականացվում է դատարկման հանգույցից: Այն հատվածներում, որտեղ անհարմար է մեքենա-մեխանիզմների կիրառումը աշխատանքները նախատեսված են ձեռքով:




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Գոյություն ունեցող ոռոգման ջրագիծ

—I₂— Նախագծվող վերգետնյա ոռոգման ջրագիծ

⋈ Նախագծվող սողնակ

Հ-ա Խողովակների միացման հանգույցներ

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Ոռոգման ջրագիծ I₁-ի լայնական կտրվածքները տես թերթ 3-ում,
2. Խողովակների միացման հանգույցների սխեմաները տես թերթ 3-ում,
3. Մասնագիրը տես թերթ 3-ում,
4. Ոռոգման ցանցի այն հատվածները, որոնք հնարավոր չէ դատարկել ինքնահոս եղանակով, անհրաժեշտ է դատարկումը իրականացնել խողովակաշարում օդի մղման միջոցով

| | | |
|---|---|---|
| ՃԱՐՏ-Տ | Կ.ԲԱԲԱՅԱՆՅԱՆ | |
| ԿԱՏԱՐՈՂ | Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | |

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների 33,35 շենքերի բակային տարածքի բարեկարգման նախագիծ Պատվերի համար՝ ԵՔ-ՊԸԱՇՁԲ-13/71-2

| ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
|---|---|---|---|
| | ԱՆ | 10 | 18 |

«ՄԻՌՈԱՐ» ՍՊԸ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ 1 (I₁)-Ի ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500

ԱՐՏՈՆԱԳԻՐ h.15422